

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման  
Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

Լոս Անջելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը հայցում է ձեր աջակցությունը Լոս Անջելեսի Վարչական Շրջանում նոր կորոնավիրուսային հիվանդություն 2019-ի (կարճ՝ COVID-19) տարածումը դանդաղեցնելու հարցում՝ հետևելով ստորև ներկայացված ցուցակի պայմաններին:

Մենք խստորեն խորհուրդ ենք տալիս, որ թմրանյութերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումների (SUD) բուժման բոլոր ոչ բնակելի հաստատությունները վերանայեն և թարմացնեն իրենց արտակարգ իրավիճակների ծրագրերը, ձեռնարկեն հստակ գործողություններ՝ օգնելու նվազեցնել շնչառական վարակների տարածումը, ինչպիսին է COVID-19-ը և ձեռնարկեն քայլեր՝ շարունակելու հիմնական ծառայությունների մատուցումը, եթե տեղում իրականացվող գործողությունները ժամանակավորապես սահմանափակվեն:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում, հետևաբար՝ կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելեսի Վարչական Շրջանի վեբ կայքը տվյալ փաստաթղթի վերաբերյալ թարմացումները բաց չթողնելու համար՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>.

Սույն ցուցակը ներառում է այն քայլերը, որոնք անհրաժեշտ են ոչ բնակելի SUD հաստատությունների անվտանգ գործունեությունն ապահովելու համար: Այս հաստատությունները պետք է հետևեն հանրային առողջապահության ուղեցույցներին, որոնք վերաբերում են այն հաստատություններին և գործողություններին, միաժամանակ առնչվում են աշխատակցի, հաճախորդի/մասնակցի անվտանգությանը, ֆիզիկական հեռավորություն կիրառելուն և վարակի վերահսկման միջոցառումներին: Ստորև ներկայացված գործառնությունները պետք է իրականացվեն ի լրացումն այդ միջոցառումներին:

## Ա. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

- Ոչ բնակելի SUD բուժման գործակալությունը պետք է տեղում ունենա ծրագիր կամ արձանագրություն հետևյալ նկատառումներով.
  - Վստահ լինի, որ աշխատակիցները և հաճախորդները տեղեկացված են COVID-19-ին վերաբերող նախազգուշական միջոցներին և վերապատրաստված են փոխանցման ռիսկը նվազեցնելու համար:
  - Կիրառի հեռախոսային և հեռավար առողջական ծառայությունները, որպեսզի ապահովի շարունակական ծառայությունները՝ նվազեցնելով ներանձնային շփումը:
  - Ապահովի պատշաճ կարանտինի և մեկուսացման գործընթացներ ինչպես աշխատակիցների, այնպես էլ հաճախորդների համար՝ ըստ անհրաժեշտության:
  - Ապահովի PPE-ի (Անձնական պաշտպանության պարագաներ) պատշաճ օգտագործումը անձնակազմի և հաճախորդների կողմից ամբողջ ընթացքում:
- Ամբողջ անձնակազմին և հաճախորդներին պետք է տեղեկացնել հիվանդության դեպքում խուսափել ոչ բնակելի SUD բուժման հաստատություններից, նմանապես, եթե շփվել են COVID-19-ը ունեցող անձի հետ, կամ եթե ախտանիշներ չունեն, բայց վերջին 10 օրվա ընթացքում COVID-19-ի թեստը դրական է եղել: Տվյալ դեպքերում նրանց խորհուրդ է տրվում նաև հետևել հանրային առողջության վարչության մեկուսացմանը կամ կարանտինին վերաբերող ուղեցույցին՝ ըստ անհրաժեշտության:
- Տեղեկանալով այն մասին, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի պատասխանը դրական է, կամ ունեն COVID-19-ին համահունչ ախտանիշներ, ոչ բնակելի SUD բուժման գործակալությունը պետք է տեղում ունենա ծրագիր կամ արձանագրություն տվյալ աշխատակցին (ներին) տանը մեկուսացնելու և պահանջելու COVID-19-ին ենթադրաբար

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լուս Անջելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման  
Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

Ենթարկված բոլոր աշխատակիցների համար անհապաղ ինքնակարանտին: Այս ծրագիրը ներառում է արձանագրություն բոլոր կարանտինացված աշխատակիցների համար, որպեսզի թեստավորվեն, կամ COVID-19-ի թեստավորման կատարումը դառնա մատչելի, և որպեսզի պարզվի՝ արդյոք աշխատավայրում եղել են բռնկման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:

- ❑ Հիվանդության հիմքով արձակուրդները պետք է լինեն ճկուն, չպետք է պատժվեն և պետք է համապատասխանեն հանրային առողջապահության ուղեցույցին:
- ❑ Ոչ բնակելի SUD բուժման հաստատությունը պետք է ունենա գրավոր արձանագրություններ կիրառելու համար հեռախոսային և հեռավար առողջապահական ծառայություններ, որպեսզի այս ծառայությունների մատուցումը շարունակվի՝ հասցնելով նվազագույնի անձանց միջև շփումը, ապահովի կարանտինի և մեկուսացման պատշաճ ընթացակարգերը ինչպես աշխատողների, այնպես էլ հաճախորդների համար, ապահովելով ամբողջ ընթացքում PPE-ի (Անձնական պաշտպանության պարագաներ) պատշաճ օգտագործումն անձնակազմի և հաճախորդների կողմից:
- ❑ Ոչ բնակելի SUD բուժման հաստատություններում ծառայությունների մեծ մասը պետք է մատուցվի վիրտուալ տարբերակով: Անձնական հանդիպումների համար այլընտրանքային տարբերակները, որոնք են հեռախոսային և հեռավար առողջապահական ծառայությունները, պետք է կիրառվեն անձանց միջև գործողությունները հնարավորինս և պատշաճորեն նվազագույնի հասցնելու միջոցով, մինչև ժամանակ հնարավորություն տալով հաճախորդներին շարունակել այս գործողությունների կատարումը:
- ❑ Ոչ բնակելի SUD բուժման գործակալությունը պետք է պահի մեկուսացման և կարանտինի մեջ գտնվող ամբողջ անձնակազմի վերաբերյալ ամենօրյա գրանցամատյան՝ հետևելու, թե երբ է մեկուսացման կամ կարանտինի ավարտի համապատասխան ժամանակը:
- ❑ Ցուցանակ
  - ❑ Ուղեցույցը պետք է տեղադրվի սպասարաններում/ ընդհանուր օգտագործման վայրերում՝ օգնելու հաճախորդներին իմանալ COVID-19-ի մասին՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/communication/factsheets.html>.
  - ❑ Նշանները պետք է տեղադրվեն, որպեսզի հիշեցնեն հաճախորդներին անմիջապես զգուշացնել անձնակազմին, եթե ունեն COVID-19-ի նման ախտանիշներ՝ ներառյալ հազ, շնչառական դժվարություն կամ դժվարացած շնչառություն, և/կամ ջերմություն կամ դող:
  - ❑ Նշանները պետք է տեղադրվեն հաճախորդների և անձնակազմի համար՝ ձեռքերի լվացման և ախտահանման կարևորության մասին:
  - ❑ COVID-19-ին վերաբերող նյութերը, որոնք Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Կորոնավիրուսի Վեբ կայքում առաջարկվում են թարգմանության համար, պետք է տրամադրվեն մասնակիցներին իրենց մայրենի լեզուներով՝ եթե հասանելի են:
- ❑ Պետք է կատարվի անհապաղ բուժօգնություն՝ զանգահարելով 911 անձնակազմի կամ հաճախորդների մոտ COVID-19-ի հետ կապված հետևյալ նախազգուշական նշաններից\* որևէ մեկի առկայության դեպքում՝
  - ❑ Դժվարացած շնչառություն
  - ❑ Ցավ կամ ճնշում կրծքավանդակում
  - ❑ Նոր շփոթվածություն
  - ❑ Դժվարություն արթնանալիս կամ արթուն լինելիս
  - ❑ Կապտած շրթուկներ կամ դեմք

## Հաճախորդները

- ❑ Ոչ բնակելի SUD բուժման հաստատություններում ծառայությունների մեծ մասը պետք է մատուցվի վիրտուալ տարբերակով: Անձնական հանդիպումների համար այլընտրանքային

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լուս Անջելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

տարբերակները, ինչպիսիք են հեռախոսային և հեռավար առողջապահական ծառայությունները, պետք է կիրառվեն անձանց միջև գործողությունները հնարավորինս և պատշաճորեն նվազագույնի հասցնելու միջոցով՝ մինևույն ժամանակ հնարավորություն տալով հաճախորդներին շարունակել այս գործողությունների կատարումը:

- Զայլեր պետք է ձեռնարկվեն բացահայտելու համար այն հիվանդներին, որոնք անցյալում կամ հաստատություն ժամանելիս, հնարավոր է, COVID-19-ով վարակված լինեն, և մեկուսացնելու նրանց հաստատության ընդհանուր բնակիչներից:
  - Հնարավորության դեպքում, նախապես գրանցված հաճախորդները պետք է հեռախոսային տարբերակով նախնական ստուգում անցնեն՝ COVID-19-ին համահունչ ախտանիշների (հազ, շնչառական դժվարություն կամ դժվարացած շնչառություն, ջերմություն կամ դող), վերջին 10 օրերի ընթացքում COVID-19-ի դրական թեստի, վերջերս COVID-19-ի դրական թեստ ունեցող անձի հետ շփման կամ դեռևս թեստ չհանձնած, բայց COVID-19-ի ախտանիշներ ունեցող այլ անձանց հետ սերտ շփման համար: Հաճախորդներին, որոնց COVID-19-ի ռիսկի համար նախնական ստուգումը դրական է լինում, պետք է հրահանգել, որպեսզի մասն տանը և իրենց այցը կատարեն հեռավար առողջապահական տարբերակով, կամ չեղարկեն, եթե պահանջվում է կլինիկայի կողմից:
  - Հաճախորդները, ովքեր ժամանում են հաստատություն առանց նախապես ստուգվելու, պետք է ստուգվեն ժամանելուն պես: Եթե արդյունքը դրական է, ապա նրանք հնարավորինս արագ պետք է տեղափոխվեն անհատական սենյակ՝ դուռը փակ: Հիվանդի հետ շփման ընթացքում անձնակազմը պետք է օգտագործի անձնական պաշտպանության համապատասխան պարագաներ (PPE): Այն բանից հետո, երբ հիվանդը ստուգվել է, և նրա վիճակը գնահատվել է, սենյակը պետք է մաքրվի EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներով:
- Ոչ բնակելի SUD բուժման հաստատություն մուտք գործելիս հաճախորդները պետք է ամբողջ ընթացքում կրեն համապատասխան դեմքի ծածկոցներ: Շատ հաճախորդների համար հարմար են կտորե դիմակները: Անձանց, որոնց COVID-19-ի ռիսկի ստուգումը եղել է դրական, հասանելի լինելու դեպքում տրամադրվում են դիմակներ: Այն դեպքում, երբ հաճախորդի բժիշկը հստակ կարգադրել է դիմակ չկրել, հաճախորդից պահանջվում է կրել ստորին հատվածում ամրացված կտորով դեմքի վահան՝ համաձայն Նահանգային հրահանգներին, եթե իր կարգավիճակը թույլ է տալիս դա: Նախընտրելի է կզակը ծածկող կտորով դեմքի վահանը: Հաճախորդներին պետք է կարգադրել չօգտագործել միակողմանի փականներով դիմակներ:
- Խմբակային գործողությունները պետք է նվազեցվեն՝ հոգուտ այլընտրանքային գործողությունների, ինչպիսիք են անհատական սեսիաները կամ այլ ոչ խմբակային գործողությունները:

### Աշխատակիցներ

- Ոչ բնակելի SUD բուժման հաստատության աշխատակիցներին, որոնք շփում ունեն ուրիշների հետ, պետք է անվճար առաջարկել առնվազն երկու պատշաճ դեմքի ծածկոցներ, որոնք փակում են քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է կրի ծածկոցը աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում՝ այլ անձանց հետ շփման կամ հնարավոր շփման ժամանակ: Եթե աշխատակցի բժիշկը կարգադրել է իրեն դիմակ չկրել, ապա աշխատակիցը պետք է կրի ստորին հատվածում ամրացված կտորով դեմքի վահան՝ համաձայն Նահանգային հրահանգներին, եթե իր կարգավիճակը թույլ է տալիս դա: Նախընտրելի է կզակը ծածկող կտորով դեմքի վահանը: Չի թույլատրվում օգտագործել միակողմանի փականներով դիմակներ: Աշխատակիցներից չի պահանջվում կրել դեմքի ծածկոցներ իրենց անձնական սենյակներում գտնվելիս կամ ամուր պատնեշով աշխատախցում գտնվելիս, որի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:
- Աշխատակիցներին պետք է կարգադրել լվալ կամ փոխել իրենց դեմքի ծածկոցները ամեն օր:
- Աշխատակիցների ստուգումները պետք է իրականացվեն կամ հեռավար տարբերակով կամ անձնապես՝ **մինչև** աշխատակիցների կողմից հաստատություն մուտք գործելը:

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լուս Անցելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

- Ստուգումները ներառում են հազի, ջերմության կամ դողի, դժվարացած շնչառության կամ շնչառական դժվարությունների ստուգումներ, ինչպես նաև ստուգումներ այն մասին, թե արդյոք աշխատակիցը շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ վերջին 14 օրերի ընթացքում:
- Հնարավորության դեպքում աշխատավայրում կատարվում են ջերմության ստուգումներ:
- Անձնակազմի անդամները պետք է վերահսկեն իրենց ախտանիշներն ամեն օր և նրանց պետք է ուղարկել տուն, եթե հիվանդ են կամ ախտանիշներ չունեն, բայց վերջին 10 օրերի ընթացքում (+) COVID-19-ի թեստ են ունեցել:
- COVID-19-ի ախտանիշներ ունեցող անձնակազմի անդամներին կամ վերջին 10 օրերի ընթացքում (+) COVID-19-ի թեստ ունեցող անդամներին պետք է տրամադրել [տնային մեկուսացման հրահանգները](#) և հրահանգել ինքնամեկուսանալ տանը և իրենց բժշկին տեղեկացնել ախտանիշների վատթարացման կամ անհրաժեշտության դեպքում:
- Անձնակազմի անդամները, որոնց ուղղորդվում է տանը իրենց մասին հոգ տանել, կարող են դադարեցնել տնային մեկուսացումը միայն այն դեպքում, եթե բավարարում են հետևյալ պայմաններին՝ անցել է առնվազն 10 օր *ախտանիշների* առաջին անգամ *ի հայտ գալու* օրվանից, ե՛վ առնվազն 24 ժամ <<*բուժումից*>> *հետո*, որը սահմանվում է որպես ջերմության բացակայություն՝ առանց ջերմիջեցնող դեղամիջոցների օգտագործման և ախտանիշների բարելավում (ինչպես օրինակ՝ հազը կամ դժվարացած շնչառությունը):
- Վարակված Աշխատակիցներ
  - Անձնակազմի անդամը, ով սերտ շփում է ունեցել ախտանիշներ ունեցող կամ չունեցող COVID-19 (+) անձանց հետ, պետք է ուղարկվի տուն կարանտին պահելու կամ պետք է հաստատության տարածքում 14 օր կարանտին պահպանի:
  - Սակայն, աշխատուժի խիստ անբավարարության ժամանակներում ախտանիշներ չունեցող անձնակազմի այն անդամները, ովքեր շփվել են վարակված անձի հետ, բայց COVID-19-ի թեստը բացասական է եղել, կարող են շարունակել աշխատել ԱՅՆ ՊԱՅՄԱՆՈՎ, ՈՐ Վիրաբուժական դիմակ կրեն աշխատավայրում գտնվելու ամբողջ ընթացքում 14 օր շարունակ:
    - Ախտանիշներ չունեցող անձնակազմի անդամը, ով վարակվել է և շարունակում է աշխատել, պետք է ինքնուրույն վերահսկի COVID-19-ի իր ախտանիշները: Նա պետք է վերահսկի իր ախտանիշները օրական երկու անգամ. առաջինը՝ մինչև աշխատանքի գալը և մյուսը՝ մոտավորապես տասներկու ժամ անց:
- Ընտրովի – Նկարագրեք աշխատակցի և հաճախորդի առողջության պաշտպանության ուրիշ միջոցառումներ:

### Բ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Աթոռները, բազմոցները և հանդիպումների ընդհանուր տարածքներում գտնվող նստելու այլ հարմարանքները պետք է այնպես դասավորված լինեն, որ թույլ տան առնվազն 6 ոտնաչափ տարածություն երկու մասնակիցների միջև:
- Յուրաքանչյուր հաճախորդին կամ անձնակազմի անդամին, ում COVID-19-ի ախտանիշների կամ հայտնի/հնարավոր վարակման ստուգման արդյունքը եղել է դրական, կամ COVID-19-ի թեստը եղել է դրական, պետք է կարգադրել դադարեցնել իր մասնակցությունը ցանկացած խմբակային գործողություններին, որը հաստատությունը շարունակում է առաջարկել և խուսափել հաստատության տարածքում այլ անձանց հետ շփումից՝ մինչև մեկուսացման կամ կարանտինի ժամանակի ավարտը:
  - Անհատական խմբակային գործունեության այլընտրանքային տարբերակները՝ ինչպիսիք

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

## Լուս Անցելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

Են անհատական սեսիաները, հեռավար առողջապահությունը կամ այլ ոչ խմբակային գործողությունները, կիրառվում են՝ անձանց միջև գործողությունները հնարավորինս և պատշաճորեն նվազագույնի հասցնելու միջոցով՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով հաճախորդներին շարունակել այս գործողությունների կատարումը:

- Չնայած խմբակային գործողությունները նվազեցվում են հոգուտ այլընտրանքային գործողությունների, ինչպիսիք են անհատական սեսիաները կամ այլ ոչ խմբակային գործողությունները, երբ ոչ բնակելի SUD բուժման հաստատություններում առաջարկվում են խմբակային գործողություններ՝
  - Մասնակիցների ընդհանուր թիվը ցանկացած հանդիպումների/խմբակային/ընդհանուր տարածքներում՝ ներառյալ հաճախորդները, խորհրդատուները և/կամ խմբերի հսկիչները, չպետք է գերազանցի 10-ը:
  - Հնարավորության դեպքում խմբակները պետք է կազմակերպվեն ժամանակ առ ժամանակ և այնպես, որ հաճախորդների ժամանելուց մարդկանց գերկուտակումներ չլինեն մուտքերի և ելքերի մոտ:
  - Խմբերի բոլոր մասնակիցներին պետք է հիշեցնել տվյալ հաստատության ներսում տեղավորելիության սահմանափակմանն առնչվող ուղեցույցին բոլոր ընդհանուր տարածքներում, ներառյալ հանդիպումների սենյակին կամ տարածքին մոտ գտնվող ծխելու տարածքներում և պետքարաններում:
- Ընտրովի – Նկարագրեք ֆիզիկական հեռավորության պահպանման ուրիշ միջոցառումներ:

### Գ. ՎԱՐՎԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Մաքրում
  - Հաճախ դիպչող մակերեսները՝ ներառյալ ընթերցման նյութերը և այլ ընդհանուր օգտագործման առարկաները, պետք է կանոնավոր կերպով մաքրվեն [CDC ախտահանման վերաբերյալ Ցուցումներին](#) համապատասխան:
  - Եթե EPA-կողմից հաստատված ախտահանիչ միջոցը հասանելի չէ, ապա կարող եք պատրաստել ձեր անձնական ախտահանիչը՝ 2% քլորային բլիչի 1 ճաշի գդալ լուծույթին խառնելով 1 քվարտ ջուր:
  - >60% սպիրտային հիմքով ախտահանիչները՝ համաձայն պիտակի ցուցումներին, օգտագործվում է որպես մաքրմանը լրացնող կամ փոխարինող միջոց, երբ և՛ մաքրումը և ախտահանումը հնարավոր չէ:
- Չի թույլատրվում սննդի/սպասքի/խմիչքի/ծխախոտների/և այլնի համատեղ օգտագործումը
- Բոլոր Հաճախորդները/խմբերի մասնակիցները պետք է ստորագրեն՝ օգտագործելով իրենց անձնական գրիչները, կամ օգտագործելով գրիչ, որը ախտահանվում է օգտագործումների միջև, կամ Էլեկտրոնային տարբերակով՝ օգտագործելով անձնական սարքեր կամ սարքեր, որոնք ախտահանվում են օգտագործողների միջև:
- HVAC ծրագիրը պետք է լինի լավ, գործող վիճակում, և օդափոխությունը հնարավոր առավելագույն չափով պետք է ավելացվի՝
  - Հաստատությունը պետք է դիտարկի օդի մաքրման բարձրորակ շարժական սարքերի տեղադրումը, շենքի օդային զտիչների թարմացումը հնարավորինս բարձր արդյունավետության և ուրիշ փոփոխությունների կատարումը աշխատանքային բոլոր տարածքներում, որպեսզի ապահովի արտաքին օդի և օդափոխության քանակի ավելացում:
- Ընտրովի – Նկարագրեք վարակի վերահսկման ուրիշ միջոցառումներ:

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լուս Անցելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման  
Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

## Դ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաճախորդների տեղափոխումը պետք է սահմանափակվի միայն կարևոր հաստատությունից դուրս այցելու:
- Վարորդները պետք է ձեռնարկեն համապատասխան նախազգուշական միջոցներ՝ ներառյալ անձնական պաշտպանիչ պարագաներ կրելը՝ ներառյալ դիմակ, ձեռնոցներ, աչքերի պաշտպանության սարք և թիկնոց:
- Բոլոր փոխադրվող անձինք պետք է կրեն վիրաբուժական դիմակներ տեղափոխության ընթացքում:
- Հիվանդները, ովքեր ախտանիշներ ունեն և/կամ COVID-19-ի թեստը դրական է եղել, պետք է փոխադրվեն հաճախորդներից առանձին, որոնք կամ դեռևս չեն թեստավորվել կամ COVID-19-ի թեստը բացասական է:
- Հնարավորության սահմաններում ջանքեր պետք է գործադրվեն, որպեսզի նվազագույնի հասցվի ախտանիշներ ունեցող կամ չունեցող COVID-19-ի դրական թեստի արդյունք ունեցող մի քանի հաճախորդների միասին փոխադրումը:
  - Երբ կա մի քանի հաճախորդների միաժամանակ տեղափոխման անհրաժեշտություն, ապա համապատասխան սոցիալական հեռավորություն (առնվազն 6 ոտնաչափ) պետք է պահպանվի ինչպես հաճախորդների, այնպես էլ վարորդի կողմից: Օրինակ, հաճախորդը պետք է նստի մեքենայի վարորդի հակառակ կողմում, և վարորդի նստատեղից ամենահեռու գտնվող նստատեղում:
- Փոխադրամիջոցի պատուհանները պետք է իջեցված լինեն փոխադրման ընթացքում (եթե եղանակը թույլ է տալիս)՝ մեքենայի մեջ օդափոխությունը բարելավելու համար:
- Փոխադրող տրանսպորտային միջոցների նստատեղերը պետք է ծածկված լինեն պլաստմասե բրեզենտով կամ ծածկոցներով, որոնք յուրաքանչյուր տեղափոխությունից հետո հնարավոր կլինի մաքրել և համապատասխանաբար ախտահանել:
- Տրանսպորտային միջոցները պետք է հագեցած լինեն լավ հիգիենայի պահպանման պարագաներով՝ ներառյալ անձեռոցիկները, աղբամանները կամ աղբի տոպրակները՝ օգտագործված անձեռոցիկները թափելու համար, և սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցները:
- Եթե հաճախորդին անհրաժեշտ է տեղափոխել հիվանդանոց կամ կլինիկա, ապա EMS-ն կամ մյուս փոխադրողը պետք է նախապես տեղեկացվի, որ հաճախորդը ունի չափսորոշված շնչառական վարակ, որպեսզի տեղափոխվող հաճախորդը կրի դեմքի համապատասխան ծածկոց:
- Ընտրովի՝ Նկարագրեք հաստատությունների միջև և փոխադրման ընթացքում վարակի տարածման նվազեցման լրացուցիչ միջոցառումներ:

## Ե. ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՏՈՒԿ ՕՊԻՈԾ ԲՈՒԺՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լուսնեցիների Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման  
Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

**Ի լրացումն վերոնշյալ կարգադրություններին, OPT հաստատությունները պետք է հետևեն նաև հետևյալ կարգադրություններին՝**

## Տուն Տանելու Դեղամիջոցներ

- OTP հաստատությունը SAMHSA OTP էքստրանետ վեբ կայքի միջոցով պետք է ներկայացնի փաստաթղթեր՝ տուն տանելու դեղամիջոցների բացառությունների համար:
  - Դեղամիջոցների բացառություններ ստանալու համար OTP-ն պետք է Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության Առողջապահական Ծառայություններին (DHCS) անհրաժեշտության սամակ ներկայացնի՝ վերանայման և հաստատման համար: DHCS-ն կվերանայի անհրաժեշտության յուրաքանչյուր նամակը և համապատասխանության դեպքում՝ կհաստատի տուն տանելու դեղամիջոցների համար ընդհանուր բացառությունները հետևյալ կերպ՝
    - Կայուն հիվանդներ՝ բացառություն կայուն հիվանդների համար OTP-ում՝ տուն տանելու դեղաչափ 28 օրվա համար:
    - Ավելի քիչ կայուն հիվանդներ՝ բացառություն կայուն հիվանդների համար OTP-ում՝ տուն տանելու դեղաչափ 14 օրվա համար:

## Մեզի Անալիզ (UA)

- Եթե հաստատվել է դեղամիջոցների UA բացառությունը, ապա OTP-ն պետք է տրամադրի թմրամիջոցների ստուգման կամ անալիզի անհրաժեշտ փաստաթղթեր՝ ներառյալ առնվազն ութ պատահական թմրամիջոցների թեստեր տարեկան մեկ անգամ բուժման պահպանման ընթացքում:

## Դեղամիջոցների Առաքում

- Պետք է լինեն արձանագրություններ՝ ապահովելու, որ դեպի հաճախորդի տուն կամ վայր դեղամիջոցների առաքումը իրականացվի OTP լիազորված անձնակազմի անդամի, օրենքի ներկայացուցչի կամ Ազգային Պահպան անձնակազմի կողմից:
  - OTP-ները պետք է ունենան դեպի տուն առաքման շղթայական փաստաթղթեր:

## 2. ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿ ՄԵՔԵՆԱ ՔՇԵԼՈՒ (DUI) ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Ի լրացումն վերոնշյալ կարգադրություններին (Բացառությամբ Ե Բաժնի) DUI ծրագրերը պետք է հետևեն նաև ստորև ներկայացված կարգադրություններին՝**

## Ծրագրի Հնարավոր Կասեցմանը Պատրաստ Լինելը

- Եթե DUI ծրագիրը կասեցրել է բոլոր ծառայությունները և ի վիճակի չէ անձնակազմ տրամադրել ծրագրի մասնակիցների էլ. հաղորդագրություններին կամ հեռախոսի հարցումներին պատասխանելու համար, ծրագիրը պետք է ձգտի պահպանել հաղորդակցությունը ծրագրի մասնակիցների և ընդհանուր հանրության հետ: Չանքերը կարող են ներառել՝
  - Ապահովում, որ էլքային հեռախոսային և էլեկտրոնային հաղորդագրություններում նշված լինի համար, որի միջոցով հնարավոր կլինի կապ հաստատել որևէ մեկի հետ,
  - Ծրագրի հաստատության մուտքերում ցուցանակների տեղադրում, որոնք կնշեն, որ ծրագիրը ժամանակավորապես փակ է և կտրամադրեն կոնտակտային համար, որի միջոցով հնարավոր կլինի կապ հաստատել որևէ մեկի հետ,
  - Ծրագրի կարգավիճակի վերաբերյալ թարմացումների տրամադրում վարչական շրջանում և նահանգում:

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելեսի Վարչական Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Ցուցումներ Թմրանյութերի Օգտագործման Հետևանքով Առաջացած Խանգարումների Բուժման  
Ոչ Բնակելի Հաստատությունների Համար

- DUI ծրագրերը, որոնք կարող են մատուցել հեռավար առողջապահական ծառայություններ, պետք է անհապաղ այդպես անեն՝ ըստ Առողջապահության Վարչության (DHCS) կայքի COVID-19-ի Վարքագծային Առողջության Վերաբերյալ Տեղեկությունների Ծանուցումների և Հեռավար Առողջապահության ՀՏՀ-ների:
- DUI ծրագրերն ավարտում են դեմ առ դեմ սեսիաները և նախնական ներգրավվածության գործընթացները հեռախոսով՝ DHCS COVID-19 ՀՏՀ-ի ծրագրերի համաձայն:

## Մասնակիցների Բացակայության Արձակուրդ (LOA)

- DUI ծրագիրն առաջարկում և հաստատում է անվճար LOA, ախտանիշներ ունեցող անձանց համար կամ նրանց համար, որոնք կարող են ախտանիշներ չունենալ, բայց մտահոգություն են հայտնում COVID-19-ի հետ կապված ծրագրային ծառայություններ հաճախելու վերաբերյալ: Այս դեպքերում, հաստատությունը բացատրում է, որ LOA-ի ընդունումը հետաձգելու է իրենց ծրագրի ավարտի ամսաթիվը:

## Լրագրուցի Աղբյուրներ

- LAC DPH կորոնավիրուսի վեբ կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>
- Լոս Անջելեսի Առողջապահության Ազդանշանի Ցանց: Հանրային Առողջապահության Վարչությունը (DPH) Էլեկտրոնային տարբերակով առողջապահության մասնագետներին LAHAN-ի միջոցով ուղարկում է կարևոր հաղորդագրություններ: Թեմաները ներառում են տեղային կամ ազգային հիվանդությունների բռնկումը և առողջության համար նոր ի հայտ եկող ռիսկերը՝ <http://publichealth.lacounty.gov/lahan/>
- [ՀՏՀ](#)
- [Ի՞նչ պետք է իմանալ \(Ինֆոգրաֆիկա\)](#)
- [Մաքրման Վերաբերյալ Ուղեցույց](#)
- [Մնացե՛ք տանը, եթե հիվանդ եք - Պաստառ](#)
- [Ձեռքերի Լվացում](#)
- [Ի՞նչ Պետք է Անեմ, Եթե Վարակվել Եմ](#)